



Ծ Ի Ա Տ Ա Ն

ԱՄՍԱԳԻՐ

ԹԵՄԱԿԱՆ, ԲԱՐՈՅԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԵԱՆՅ.

ՅՈՒՆՈՒԱՐ

1863 ԱՄԻ.

ԹԵՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ



ախիջեւանի Ս. նիկողայոս եկեղեցւոյ ուրարակիր դպիրն աիրացու Մարգար Զէրքէզեան, որոշուեցաւ Առաջնորդական հրամանաւ դպիր եկեղեցւոյն Մոսկուայի, եւ յուղարկուեցաւ այն մայրաքաղաքը :

— Սուքիասեան Տէր Գրիգոր Աւագ քահանայն, Սինոդական որոշմամբ: հրաման ունենալով՝ նախիջեւանի եւ Պեսարապիոյ վիճակիս եկեղեցիներէն մէկուն մէջ քահանայագործութիւն ընելու, եկաւ Թէոգոսիա, եւ նշանակուեցաւ նախիջեւան քա-

ղաքին Ս. Աստուածածնայ եկեղեցւոյն քահանայ, հովուելով առ այժմ՝ եկեղեցւոյն ժողովրդոց այն ծուխը՝ զոր կհսովուէր հանդուցեալ Գաբրիէլ քահանայն ձաւճաւեան :

— Քիշնեւի ժողովրդական դպրոցին ուսուցիչ, եւ միանգամայն նոյն եկեղեցւոյն դպիր որոշուեցաւ աիրացու Յարութիւն Խազանճեան, որ Խալիպեան Ուսումնարանին չորրորդ դասարանէն ելած աշակերտ էր :

— Թէոգոսիոյ ժողովրդական դպրոցին ալ ուսուցիչ նշանակուեցաւ՝ այն Ուսումնարանէն ելած աշակերտը՝ Մկրտիչ Սամուէլեան :

— Ս. Էջմիածնայ Սինոդը կճանուցանէ՝ թէ Էլմասեան Աւետիս քահանայն, որ իւր յանցաւորութիւնը գիտնալով՝ առանց վիճակային իշխանութեան հրամանին եւ առանց օրինաւոր անցագրի գնացեր էր Կերչէն Թիֆլիզ եւ Էջմիածին, սաստիկ յանդիմանութիւն լսեր է Վեհափառ Կաթողիկոսէն՝ իւր ինքնակամ եւ անկարգ գործողութեանը համար. եւ միայն ցաւազարութեանը պատճառաւ ներողութեան արժանի դատուելով, հրաման ընդուներ է Թիֆլիզու վիճակին քաղաքներէն կամ գեղերէն մէկուն մէջ քահանայագործութիւն ընելու :

— Թէոդոսիոյ քահանայն Արժանապատիւ Տէր Մարտիրոս Տէր-Դաւթեան, Յունուարի 1-ին ընդունեցաւ Գեր. Առաջնորդէն Աւագ ֆահանայութեան կոչումը՝ այսպիսի հրամանագրով.

« Յիսուսի Քրիստոսի ծառայ Գաբրիէլ Վարդապետ Այվազեան, Տեղակալ Առաջնորդութեան Վիճակիս Հայոց Նախիջեւանի եւ Պեսարապիոյ.

« Արժանապատիւ Տեսուն Մարտիրոսի Շնորհագարդ ֆահանայի ի Տէր խնդալ.

« Քանզի օրէնք Քրիստոսագօր Պետութեանս վայելչապէս պահանջեն՝ զի որք միանգամ ի քահանայից կարգեալ իցեն կամ կարգիցին ի պաշտօն Անդամոյ Առաջնորդական Ատենից՝ ունիցին զստիճան պատուոյ եւ զկոչումն Աւագ քահանայի, տեսեալ մեր ի վեցից եւ աւելի ամաց հետէ զձերդ անյողդող հաւատարմութիւն ի գործ այնր պաշտաման, եւս եւ ըստ արժանի քահանայական սուրբ կոչմանդ քաղաքավարութիւն, ոչ միայն հեռի ի զօշաքաղութենէ, ի դատարկու-

թենէ, յանհոգութենէ, եւ բնաւ իսկ յամենայնէ որք արատաւորեն զանուն եւ զպատիւ պաշտօնէից Աստուծոյ, այլ եւ ճոխացեալ պէսպէս բարեմասնութեամբք, յորոց միջի վկայեալ է յամենեցուն անխոնջ աշխատասիրութիւն ձեր յօգուտ եւ ի պայծառութիւն եկեղեցեաց քաղաքիս, եւ փութաջան աշխատութիւնքդ ի շահել զցրտացեալսն յեկեղեցոյ, եւ ի բառնալ զգժտութիւնս ծագեալս երբէք երբէք ի մէջ հաւատացելոց, ահա սովին զբրովս տամք ձեզ իշխանութիւն կրելոյ զանուն եւ զպատիւ Աւագ քահանայի եկեղեցոյն Թէոդոսիոյ. զորմէ եւ առանձին առաջադրութեամբ զեկուցանեմք Առաջնորդական Ատենիս մերում, զի ի ցուցակ պաշտաման ձերոյ արձանագրեցի յայսմ 1865 ամի այս կոչումն Աւագ քահանայութեան: Ուրախ եմք, զի ի սոյն յորդորեցաք մեք եւ ի բարեսէր խնդրոյ բազմաց յիշխանաւորաց ժողովրդեան մերոյ, եւ յանուանէ յարգիւնական երէցփոխանէ եկեղեցեաց քաղաքիս՝ ի Մահատի Վարդերես Աղայէ Ձեմպէրճեան. եւ ոչ ինչ երկբայիմք՝ զի այսու եւ եւս խրախուսեսցիք եւ դուք յաւելուլ ի փոյթ ձեր եւ ի ջանացողութիւն, եւ լիովին արդարացուցանել զակնկալութիւն մեր՝ թէ զամ քան զգամ արժանաւոր եղիջիք մեծագունից եւս եւ պայծառագոյն վարձատրութեանց: Իսկ զստոյգն եւ զկատարեալ հատուցումն փոխարինի աստուածահաճոյ եւ անձնանուէր վաստակոցն ձերոց՝ մաղթեմք ձեզ ի Տուողէն ամենայն բարեաց յԱստուծոյ: Ողջ լերուք:

« Տուաւ յԱռաջնորդարանիս մերում որ ի Թէոդոսիա, յամի Տեսուն 1865 ի Յունուարի 1, եւ ի մերումս թուաբերութեան ՌՅԺԳ, ի Քաղոցի ԺԸ:

ԳՍԲԻԷԼ Վ. ԱՅՎԱԶԵԱՆ

